«ՎԻՆՆԵԹ Հայաստան»
Կանանց Ռեսուրս կենտրոնների
Ցանց

2016 – 2020թթ.
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

1. Բովանդակություն

1. Բովանդակություն 2
2. Ակնարկ ցանցի ստեղծման վերաբերյալ 3
3. Ռազմավարական ծրագրի նպատակներն ու սկզբունքները 5
4. Ցանցի առաքելությունը, տեսլականը և արժեքները 2
   4.1. Ցանցի առաքելությունը 5
   4.2. Ցանցի տեսլականը 6
   4.3. Ցանցի արժեքները 6
5. Ցանցի գործունեության նպատակները 7
6. Ցանցի գործունեության գերակա ուղղություններն ու խնդիրները 2016-2020թթ. 8
   6.1. Աջակցել Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության ձևավորմանը, իրականացմանը և մոնիտորինգին 8
   6.2. Խթանել քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցությունը բոլոր մակարդակներում 9
   6.3. Աջակցել կանանց առողջության պահպանմանը 9
   6.4. Նպաստել կանանց սոցիալական պաշտպանության համակարգի բարելավմանը 10
   6.5. Աջակցել գենդերային բռնության կանխարգելմանը 10
   6.6. Խթանել կանանց մասնակցությունը հակամարտությունների կարգավորմանը և խաղաղարար գործունեությանը 11
   6.7. Աջակցել կանանց տնտեսական դերի և մրցունակության զարգացմանը 11
   6.8. Զարգացնել Ցանցի և դրա անդամ կառույցների ինստիտուցիոնալ կարողությունները 12
   6.9. Ընդլայնել Ցանցի գործունեությունը Հայաստանում և Արևելյան գործընկերության երկրներում 14
7. Գործողությունների ծրագիր 15
8. Ցանցի կառավարումը 15
9. Հավելված 28
   9.1. SWOT վերլուծության արդյունքներ 28

2. Ակնարկ ցանցի ստեղծման վերաբերյալ

2008 թվականին, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանյան գրասենյակի նախաձեռնությամբ և աջակցությամբ, համայնքներում ակտիվ կանայք՝ Սյունիքի մարզում կանանց տնտեսական և քաղաքական հզորացմանը հետամուտ, ստեղծել են <Մեղրու կանանց ռեսուրս կենտրոն> և <Կապանի կանանց ռեսուրս կենտրոն> հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև Գորիսում՝ <Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամը>, որոնք հետագայում իրենց ջանքերը միավորեցին Սյունիքի կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի (ՍԿՌԿՑ) շրջանակներում :

2014 թվականին ՍԿՌԿՑ-ն դարձավ ՎԻՆՆԵԹ Եվրոպայի (European Association of Resource Centers for Women - WINNET Europe) պաշտոնական անդամ և վերակազմակերպվեց որպես «ՎԻՆՆԵԹ Հայաստան» Կանանց ռեսուրս կենտրոնների ցանց (այսուհետ՝ ՎԻՆՆԵԹ Հայաստան)՝ տարբեր ոլորտներում կանանց դերն ու մրցունակությունը բարձրացնելու համար՝ ազգային, տարածաշրջանային և համայնքային մակարդակներում:

Իր հիմնադրումից ի վեր ՎԻՆՆԵԹ Հայաստանի ջանքերն ուղղված են եղել Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում և տարածաշրջաններում կանանց ռեսուրս կենտրոնների զարգացմանն ու նոր կենտրոնների ստեղծմանը: 2014թ <ՎԻՆՆԵԹ Հայաստանը> ունեցավ երեք նոր անդամ կազմակերպություններ Սիսիան, Եղեգնաձոր և Իջևան քաղաքներում: Ցանցի ընդլայնման աշխատանքներին մեծապես աջակցել են ԵԱՀԿ երևանյան գրասենյակը և Ժողովրդավարության եվրոպական հաստատության հիմնադրամը (European Endowment for Democracy Fund): ՎԻՆՆԵԹ Հայաստանը շարունակաբար ռեսուրսներ է հայթհայթում զարգացման, իր անդամների հզորացման և ցանցի ընդլայնման համար:

Կանանց տնտեսական հզորացման ոլորտում ցանցը իրականացրել է մի շարք նախաձեռնություններ: Այսպես, «Կանանց տնտեսական հզորացման» ծրագրի շրջանակներում ստեղծվել են կանանց գործարար (բիզնես) ակումբներ, որոնք զարգացրել են կանանց՝ ձեռնարկատիրության և գործարար հմտությունները, բարձրացվել է նրանց մրցունակությունը աշխատաշուկայում: Տարբեր նախաձեռնությունների շրջանակներում կազմակերպված դասընթացներն ուղղված են եղել կանանց մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև գործարար հմտությունների, ինքնակենսագրություն և ուղեկցող նամակ շարադրելու, աշխատանքի հարցազրույցի հիմունքների, հանրային հաղորդակցության և առաջնորդության հմտությունների զարգացմանը :

3. Սյունիքի մարզում ձեռքի աշխատանքների զարգացման ծրագրի շրջանակներում գործազուրկ կանանց համար աշխատատեղեր են ստեղծվել՝ ձեռքի աշխատանքների ակումբներ ստեղծելու միջոցով, որտեղ կանայք հնարավորություն են ունենում ձեռագործ աշխատանքներ պատրաստել և վաճառել տեղական, հայաստանյան և միջազգային շուկաներում: Ծրագիրը

կայուն զբաղվածություն և աշխատանք ապահովեց ցածր եկամուտ ունեցող ընտանիքների ավելի քան 120 կնոջ համար:

Նախաձեռնության շրջանակներում Սյունիքի մարզի 4 քաղաքներում Ռեսուրս կենտրոններին կից գործող ակումբների անդամների համար կազմակերպվեցին ձեռքի աշխատանքի զարգացման մասնագիտական դասընթացներ, որոնց շնորհիվ կանայք կիրառական արվեստի մասնագիտական նոր հմտություններ ձեռք բերեցին:

Ցանցը բազմիցս տեղական և միջազգային մասնագիտական խորհրդատվության հնարավորություններ է ապահովել կանանց համար: Խորհրդատուների նորարարական առաջարկների շնորհիվ արհեստագործ կանայք բարելավել են իրենց աշխատանքի ու արտադրանքի որակը, իսկ նրանց պատրաստած ապրանքները ներկայացվել և իրացվել են միջազգային շուկայում:

Ցանցի շնորհիվ կին գործարարները հնարավորություն են ստացել պարբերաբար մասնակցել և իրենց աշխատանքը ներկայացնել ցուցահանդեսների, ինչպես նաև Հայաստանում ու արտերկրում կազմակերպվող տարբեր ցուցահանդեսների: Ընդհանուր առմամբ, ռեսուրս կենտրոնների միջնորդությամբ տարբեր շուկաներում ներկայացվել և վաճառվել են կանանց հազարավոր ձեռագործ աշխատանքներ:

Ցանցի նախաձեռնություններն ուղղվել են նաև կանանց քաղաքական մասնակցության խթանման ու երկրի ժողովրդավարացմանը:

Այսպես, Տեղական մակարդակում կանանց քաղաքական հզորացման ծրագրի ջանքերն ուղղվել են համայնքային մակարդակում կանանց քաղաքական գործունեության խթանմանն ու 2013թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կանանց մասնակցության բարձրացմանը Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի 6 քաղաքային և 14 գյուղական համայնքներում: Արդյունքում, 38 կանանցից 27-ը (68.8%) ընտրվեց համայնքի ղեկավար կամ ավագանու անդամ: Ընտրված կանայք նպաստեցին ցանցի նպատակների իրականացմանն ու ՏԻՄ-երի հետ համագործակցության զարգացմանը:

Սյունիքի մարզում իրականացված առաջնորդության զարգացման ծրագիրն ուղղված էր երիտասարդ կանանց կարողությունների հզորացմանը, առաջնորդության զարգացմանը և քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում նրանց գործունեության խթանմանը: Այս նախաձեռնության շնորհիվ ավելի քան 200 կին հնարավորություն ստացավ զարգացնել իր հմտություններ ու մրցունակ աշխատանք գտնել: Ավելի քան 150 երիտասարդ առաջնորդ, ստացած գիտելիքների և հմտությունների շնորհիվ, ակտիվորեն ներգրավվեց ընտրական գործընթացներում:

Երիտասարդ լրագրողների գործողությունների աջակցության շնորհիվ Սյունիքի մարզում էականորեն ընդլայնվեց խոսքի և արտահայտվելու ազատությունը: Մարզում ստեղծվեց լրատվական երկու հարթակ՝ Երիտասարդ լրագրողների «Շառավիղ» ակումբը Գորիսում (http://sharavigh.blogspot.com) և «Մեղրի նյուզը» Մեղրիում (http://meghrinews.com): Ակումբների անդամները երիտասարդներ են, ովքեր հետևում են հանրային օրակարգին ու իրադարձություններին և փորձում օգնել համայնքային խնդիրների հրապարակայնացմանն ու լուծմանը: Ակումբների բլոգերը օնլայն հարթակ են, ուր երիտասարդ լրագրողները նույնպես բարձրաձայնում են հանրային կարևորության խնդիրները: Ակումբները սերտորեն համագործակցում են մի շարք

հեռուստաընկերությունների հետ, որոնք հեռարձակում են ակումբի անդամների պատրաստած տեսանյութերը ազգային և մարզային հեռուստաալիքներով:

4. Ռազմավարական ծրագրի նպատակներն ու սկզբունքները

Սույն փաստաթուղթը (2016-2020թթ.) վերահաստատում է «ՎԻՆՆԵԹ Հայաստան» Կանանց Ռեսուրս կենտրոնների ցանցի առաքելությունը, տեսլականը և արժեքները, սահմանում է միջնաժամկետ հատվածում Ցանցի նպատակները, գործունեության գերակա ուղղություններն ու խնդիրները:

Ռազմավարական ծրագրի հիման վրա Ցանցը յուրաքանչյուր տարի մշակելու է գործունեության տարեկան պլանը, դրանում սահմանելով նպատակների իրականացմանն ուղղված տվյալ տարվա խնդիրները, գործողություններն ու ծրագրերը, դրանց կատարման հիմնական պատասխանատուներին և համակատարողներին, անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներն ու դրանց աղբյուրները:

Ռազմավարական ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով Ցանցի ուժեղ և թույլ կողմերը, միջնաժամկետ հատվածում գնահատված նպաստավոր արտաքին հնարավորություններն ու աննպաստ մարտահրավերներն ու վտանգները: Այն ապահովում է նաև Ցանցի կառավարման մարմինների գործողությունների նպատակաուղղվածությունը, արդյունավետությունը, իր անդամների կարիքներին ցանցի գործունեության համապատասխանությունը, Ցանցի գործունեության թափանցիկություն ու կառավարման մարմինների պատշաճ հաշվետվողականությունը:

Ցամցի ներքին և արտաքին միջավայրի վերլուծությունը կատարվել է SWOT վերլուծությամբ: Վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտել ցանցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու մարտահրավերները: Արտաքին միջավայրի վերլուծությունը ներառում է, մասնավորապես, տնտեսական իրավիճակը, քաղաքական գործընթացները, տեխնոլոգիական զարգացման մակարդակը երկրում և այլն: Ցանցի ներքին միջավայրի վերլուծությունը բացահայտել է մի շարք գործոններ, այդ թվում՝ մարդկային ռեսուրսները, կառավարման մարմինների կարողությունները, ենթակառուցվածքները, ռեսուրսները, հեղինակությունը, միջազգային կապերը: Վերլուծության հիմնական բաղադրիչները ներկայացված են սույն փաստաթղթի Հավելվածում:

4.1. Ցանցի առաքելությունը

Ցանցի առաքելությունը Հայաստանում և Արևելյան գործընկերության երկրներում կանանց հզորացումն է՝ համայնքային, մարզային, ազգային և տարածաշրջանային մակարդակներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծման և զարգացման միջոցով:

4.2. Ցանցի տեսլականը

Անցումային տնտեսության և ժողովրդավարական ինստիտուտների կայացման փուլում կանանց տնտեսական և քաղաքական հզորացումը պահանջում է.

- տնտեսության և քաղաքականության մեջ կանանց **մրցունակության** բարձրացում, այդ թվում՝ շուկայի պահանջներին համապատասխան **կարողությունների** զարգացման միջոցով.
- կանանց **զբաղվածության** հնարավորությունների աստիճանական ընդլայնում, այդ թվում՝ տեղական մատչելի հումքի վրա հիմնված **սոցիալական ձեռնարկատիրության** զարգացման միջոցով.
- **Աշխատաշուկայում** կանանց մասնակցության մեծացման և **ընտանիքի խնամքի համադրելիության** հնարավորությունների ընդլայնման համար նպաստավոր **քաղաքականության** միջավայրի ձևավորում և խթանում, այդ թվում՝ կանանց կարիքների վրա խարսխված տնտեսական և սոցիալական քաղաքականության և ծրագրերի մշակման և իրականացման միջոցով.
- կանանց տնտեսական և քաղաքացիական **ակտիվության** բարձրացում և **մոբիլիզացում**, այդ թվում՝ իրենց տնտեսական և հանրային շահերի առաջ մղման ուղղված՝ կանանց և նրանց խմբերի միջև **համագործակցության** հաստատման և ծավալման միջոցով.
- **սոցիալական փոփոխություններին** ուղղված նախաձեռնությունների **արդյունավետության** բարձրացում, այդ թվում՝ կանանց ռեսուրս կենտրոնների ջանքերի պարբերական **մոնիտորինգի** և **գնահատման** միջոցով.
- Հայաստանում և Արևելյան գործընկերության այլ երկրներում Ցանցի **դերի** ու **ազդեցության** մեծացում, ռեսուրս կենտրոնների և դրանց **ցանցի կարողությունների հզորացում**, այդ թվում՝ ռեսուրս կենտրոնների **մարդկային ռեսուրսների** կարողությունների զարգացման, կենտրոնների և ցանցի **գույքի և ֆինանսական միջոցների** ընդլայնման, սոցիալական ձեռնարկությունների **ենթակառուցվածքների** զարգացման, միջնաժամկետ և երկարաժամկետ իրատեսական և արդյունավետ **ծրագրերի** մշակման ու դրանց իրականացման, Հայաստանում և տարածաշրջանում Ցանցի **ճանաչելիության** և **միջազգային կապերի** ամրապնդման, այդ թվում՝ ՎԻՆՆԵԹ Եվրոպային անդամակցության միջոցով:

4.3. Միության արժեքները

Միության անդամները կարևորում են իրենց ընդհանուր արժեքները:

Մենք վստահ ենք, որ Ցանցի առաքելության իրականացման համար կենսական է նրա անդամների միջև սերտ **համագործակցությունը**, Ցանցի առաքելությանն անմնացորդ **նվիրվածությունը**, անդամների **համախմբվածությունն** ու **նպատակասլացությունը**, փոխադարձ աջակցության **պատրաստակամությունն** ու **վստահությունը** անդամ կազմակերպությունների միջև:

Ցանցի գործունեության ընթացքում կարևորվում է անդամների միջև **հավասարությունն** ու փոխադարձ **հարգանքը**, **բազմակարծությունը**, գաղափարների ու կարծիքների հանդեպ **հանդուրժողականությունն** ու **համբերատարությունն** աշխատանքում:

Ցանցը հիմնված է կանանց **ներգրավվածության** ու **ակտիվության**, ինչպես նաև համատեղ նպատակների, խնդիրների և արդյունքների համար անդամների հավաքական ու անհատական **պատասխանատվության** արժեքների վրա:

Ցանցի անդամները կարևորում են կանանց **նորարարությունը**, **արհեստավարժությունն** ու **մրցունակությունը** կանանց ռեսուրս կենտրոնների գործունեության մեջ:

Ռեսուրս կենտրոնների կառավարման գործում Միությունը հետևողականորեն պահպանելու է **անկողմնակալության**, **թափանցիկության**, **արդյունավետության** ու **հաշվետվողականության** սկզբունքները:

Ցանցի անդամները գնահատում են **հումորի զգացումը**, կարևորում են **լավատեսությունն** ու ձգտում ցանցի գործունեությզն **ճանաչելիությանը**:

Ցանցի անդամները վստահ են, որ կանանց զարգացման յուրաքանչյուր հնարավորություն՝ հնարավորություն է ողջ հասարակության բարօրության համար: Կանանց **անկախության**, տնտեսական և քաղաքական որոշումներում կանանց **մասնակցության** և նրանց քաղաքական ու տնտեսական **ինքնուրույնության** բարձրացումը նպաստում է հասարակության համար կայացված որոշումների օգտակարությանը:

5. Ցանցի գործունեության նպատակները

Միջնաժամկետ հատվածում Ցանցի գործունեության **հիմնական նպատակը** Հայաստանում և Արևելյան գործընկերության այլ երկրներում կանանց տնտեսական և քաղաքական հզորացումն է՝

- (ա) գենդերային քաղաքականության արդյունավետ իրականացման,
- (բ) քաղաքական որոշումների կայացմանը կանանց մասնակցության ընդլայնման,
- (գ) կանանց առողջության պահպանման,
- (դ) կանանց սոցիալական պաշտպանության բարելավման,
- (ե) գենդերային բռնության կանխարգելման,
- (զ) հակամարտությունների կարգավորմանը և խաղաղարար գործունեությանը կանանց մասնակցության ապահովման,
- (է) կանանց տնտեսական դերի և մրցունակության զարգացման,
- (ը) Ցանցի և դրա անդամ կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման, և
- (թ) Հայաստանում և Արևելյան գործընկերության այլ երկրներում Ցանցի գործունեության ընդլայնման միջոցով:

6. Ցանցի գործունեության գերակա ուղղություններն ու խնդիրները 2016-2020թթ.

Իր առաքելությանը համահունչ, միջնաժամկետ հատվածում իր նպատակների իրականացմանը հետամուտ, ՎԻՆՆԵԹ Հայաստան Կանանց Ռեսուրս կենտրոնների Ցանցը սահմանում է իր գործունեության **գերակա ուղղություններն** ու համապատասխան **խնդիրները**:

6.1. Աջակցել Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության ձևավորմանը, իրականացմանը և մոնիտորինգին

Գենդերային քաղաքականության ձևավորման, իրականացման և մոնիտորինգի ոլորտում Ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.1.1. Թիրախ տարածաշրջաններում Ցանցի փորձառության, շահառուների կարիքների ներառում գենդերային քաղաքականության մշակման գործընթացում, այդ թվում՝

- առանձին ոլորտներում պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի նպատակով ստեղված գերատեսչական և միջգերատեսչական հանձնաժողովներում ու խորհուրդներում Ցանցի ներկայացվածությունն ապահովելու,
- թիրախ տարածաշրջաններում գործող մարզային և համայնքային գենդերային հանձնաժողովների գործունեությանը Ցանցի մասնակցությունն ապահովելու,
- Ցանցի շահառուների կարիքները պարբերաբար ամբողջականացնելու և համապատասխան հարթակներում դրանք շարունակաբար բարձրաձայնելու միջոցով:

6.1.2. Թիրախ տարածաշրջաններում գենդերային պետական քաղաքականության իրականացման մոնիտորինգ, այդ թվում՝

- Ցանցի մոնիտորինգի գործիքակազմի ամբողջականացման և պետական ծրագրերը քարտեզավորելու.
- մոնիտորինգի գործիքները հետևողականորեն կիրառելու, մոնիտորինգի և դրանց արդյունքների վերլուծությունների իրականացման, առաջարկների մշակման միջոցով:

6.1.3. Թիրախ տարածաշրջաններում համայնքային զարգացման քառամյա ծրագրերում և տարեկան բյուջեներում գենդերային հիմնախնդիրների ներառմանը աջակցություն, այդ թվում՝

- քույր քաղաքների համագործակցության օրակարգում համայնքի զարգացման սահմանված խնդիրներում գենդերային բաղադրիչի ներառումն ապահովելու.
- տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն հաստատելու և զարգացնելու, համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու.

- համայնքային և մարզային մակարդակում Ցանցի անդամ կազմակերպությունների շահառուների, անդամների կարիքները, մոտեցումներն ու առաջարկությունները ներկայացնելու միջոցով:

6.2. Խթանել քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցությունը բոլոր մակարդակներում

Քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության խթանման ոլորտում Ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.2.1. Կանանց՝ որոշումների կայացման գործընթացին արդյունավետ կերպով մասնակցելու կարողությունների հզորացում, այդ թվում՝

- երիտասարդ կանանց առաջնորդության խթանման և դեպի քաղաքականություն նրանց ուղղորդելու միջոցով:

6.2.2. Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման, կանանց հիմնախնդիրների լուծման գործում քաղաքական կուսակցությունների դերի բարձրացում, այդ թվում՝

- քաղաքական կուսակցությունների պլատֆորմներում գենդերային հիմնախնդիրների ներառման և դրանց լուծման ուղղությամբ կուսակցությունների ստանձնած պարտավորությունների իրականացման մոնիտորինգի ու գնահատման միջոցով:

6.2.3. ՏԻՄ համակարգի բարեփոխումներում և իշխանության ապակենտրոնացման գործընթացներում կանանց քաղաքական մասնակցության խնդիրների ներառման ապահովում, այդ թվում՝

- ՀՀ համայնքների խոշորացման արդյունքում տեղական ինքնակառավարմանը կանանց մասնակցության մարտահրավերների և հնարավորությունների գնահատման միջոցով:

6.3. Աջակցել կանանց առողջության պահպանմանը

Կանանց առողջության պահպանման ոլորտում Ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.3.1. Առողջության պահպանման հարցերի և կանանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, այդ թվում՝

- վերարտադրողական առողջության, ոչ վարակիչ հիվանդությունների, երեխայի խնամքի և առողջության, առողջ ապրելակերպի խնդիրների վերաբերյալ իրազեկման քարոզարշավի իրականացման միջոցով:

6.3.2. Կանանց, երեխաներին և ընտանիքներին տրամադրվող առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը նպաստում, այդ թվում՝

- ծննդօգնության և այլ ծառայությունների մատուցման մոնիտորինգի տարրեր ու մեխանիզմներ մշակելու.
- թիրախ տարածաշրջաններում մոնիտորինգի իրականացման միջոցով:

6.4. Նպաստել կանանց սոցիալական պաշտպանության համակարգի բարելավմանը

Կանանց սոցիալական պաշտպանության ոլորտում Ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.4.1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական ապահովության իրավունքների վերաբերյալ կանանց և ընտանիքների, ցանցի շահառուների իրազեկվածության բարձրացում, այդ թվում՝

- ոլորտային հանձնախմբերին անդամակցելու.
- թիրախ տարածաշրջաններում Իրազեկման քարոզարշավի ծրագիր մշակելու և իրականացնելու միջոցով:

6.4.2. Ցանցի շահառուների սոցիալական ապահովության իրավունքների իրականացմանը աջակցություն, այդ թվում՝

- շահառուներին սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակով ուղղորդման.
- շահառուների կարիքների բավարարման նպատակով գործընկեր կառույցների հետ համագործակցություն հաստատելու և զարգացնելու միջոցով:

6.5. Աջակցել գենդերային բռնության կանխարգելմանը

Գենդերային բռնության կանխարգելման ոլորտում Ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.5.1. Թիրախ տարածաշրջաններում գենդերային բռնության դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացման մոնիտորինգ, այդ թվում՝

- մոնիտորինգի գործիքակազմ ու մեխանիզմներ մշակելու
- շարունակական մոնիտորինգ իրականացնելու և մոնիտորինգի արդյունքների հրապարակայնությունն ապահովելու միջոցով:

6.5.2. Գենդերային բռնության զոհերի ուղղորդում և առանձին ծառայությունների մատուցում, այդ թվում՝

- Ցանցի գործունեության տարածաշրջանում գենդերային բռնության դեմ պայքարի տեղական կոալիցիայի աշխատանքներն իրականացնելու.
- Լավագույն փորձի հիման վրա համար ծրագիր մշակելու միջոցով

6.5.3. Գենդերային բռնության հետևանքների, պատճառների և դրսևորումների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում, այդ թվում՝

- թիրախ տարածաշրջաններում իրազեկման քարոզարշավի մշակման և իրականացման միջոցով:

6.6. Խթանել կանանց մասնակցությունը հակամարտությունների կարգավորմանը և խաղաղարար գործունեությանը

Հակամարտությունների կարգավորմանն ու խաղաղարար ոլորտում ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.6.1. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում կանանց և երեխաների հատուկ և զարգացման կարիքների բացահայտում, գնահատում և բարձրաձայնում և դրանց լուծմանն ուղղված նախաձեռնությունների մշակում, այդ թվում՝

- սահմանամերձ թիրախ համայնքներում համապատասխան ծրագիր մշակելու և իրականացնելու.
- հակամարտություններից տուժած կանանց և երեխաներին հասարակությանը լիարժեք ինտեգրմանն աջակցելու միջոցով:

6.6.2. ՎԻՆՆԵԹ Եվրոպայի հարթակում ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման խնդիրների ներկայացում և երկխոսության ծավալում:

6.6.3. ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման գործողությունների ազգային ծրագրի մշակմանն ու իրականացմանը մասնակցություն, և թիրախ տարածաշրջաններում մոնիտորինգ, այդ թվում՝

- ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման ազգային ծրագրի մշակման աշխատանքներն իրականացնող աշխատանքային խմբին աջակցելու, համապատասխան առաջարկներ մշակելու և տրամադրելու.
- ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման ազգային ծրագրի մոնիտորինգի գործիքակազմի և մեխանիզմներ մշակելու ու թիրախ տարածաշրջաններում ներդնելու միջոցով:

6.7. Աջակցել կանանց տնտեսական դերի և մրցունակության զարգացմանը

Կանանց տնտեսական դերի և մրցունակության բարձրացման ոլորտում Ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.7.1. Ձեռներեցության ոլորտում կանանց հետաքրքրվածության ու ներգրավվածության բարձրացում, այդ թվում՝

- թիրախ տարածաշրջաններում կարիքի գնահատում իրականացնելու.
- իրազեկման, խորհրդատվության և մենթորության միջոցառումներ իրականացնելու.
- կանանց և ընտանեկան բիզնեսների կարողությունները զարգացնելու միջոցով:

6.7.2. Թիրախ տարածաշրջաններում կանանց ձեռներեցության զարգացում, այդ թվում՝

- թիրախ շուկաներում (թիրախ տարածաշրջաններ, Հայաստան, գլոբալ) շուկայի հետազոտություն իրականացնելու.
- կանանց ձեռներեցության շուկաները Հայաստանում և արտերկրում ընդլայնելու, գործարար կապեր ստեղծելու և ամրապնդելու, ցուցահանդեսներին Ցանցի և շահառուների մասնակցությունն ապահովելու.
- թիրախ տարածաշրջաններում կանանց ձեռներեցության զարգացման ֆինանսավորման աղբյուրները դիվերսիֆիկացնելու
- ռեսուրս կենտրոններին կից սոցիալական ձեռնարկություններ ստեղծելու և դրանց գործունեությունը կառավարելու միջոցով:

6.7.3. Թիրախ տարածաշրջաններում կանանց զբաղվածության ընդլայնում, այդ թվում՝

- գարգազման ուղղությունները բացահայտող կարիքի գնահատում իրականացնելու.
- նոր աշխատատեղեր ստեղծելու (տնայնագործություն, նորարար և բարձր վարձատրությամբ) ծրագրեր մշակելու և իրականացնելու.
- աշխատաշուկայում կանանց մասնագիտական մրցունակության բարձրացման ծրագրեր մշակելու և իրականացնելու միջոցով:

6.8. Զարգացնել Ցանցի և դրա անդամ կառույցների ինստիտուցիոնալ կարողությունները

Ցանցի և դրա անդամ կառույցների կարողությունների զարգացման ոլորտում Ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.8.1. Ցանցի անդամ կառույցների և ցանցի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում և զարգացման պլանների մշակում, այդ թվում՝

- գնահատման գործիք մշակելու, գնահատումն իրականացնելու և արդյունքների հաշվետվության պատրաստման.
- կազմակերպությունների անհատական և ցանցային զարգացման պլանների մշակման և պատասխանատուներին հստակեցնելու միջոցով:

6.8.2. Ցանցի կառավարման համակարգի զարգացում, համապատասխան չափորոշիչներ և ընթացակարգերի մշակում, այդ թվում՝

- Ցանցի կանոնադրությունը մշակելու և հաստատելու.
- Ցանցի կառավարման ընթացակարգերն ու կառուցվածքը, հաշվետվողականության (ֆինանսական և ծրագրային աուդիտ) և թափանցիկության (հաշվետվություններ) գործիքներ մշակելու և ներդնելու.
- մարդկային ռեսուրսների կառավարման ներքին ընթացակարգեր (պայմանագրեր, աշխատանքի նկարագրեր, տեխնիկական առաջադրանքներ, ներծրագրային ToR-եր) և կատարողականության մեխանիզմ մշակելու և ներդնելու
- արդյունավետ հաղորդակցության համակարգեր (էլեկտրոնային ընթացակարգեր և ձևանմուշներ), միասնական փաստաթղթաշրջանառության համակարգ, ֆինանսական հաշվետվությունների համակարգ մշակելու և ներդնելու միջոցով:

6.8.3. ցանցի հանրային հաղորդակցության և կապերի ռազմավարության մշակում, այդ թվում՝

- շահագրգիռ կողմերի քարտեզագրման և ռազմավարության մշակման.
- հանրային հաղորդակցության և կապերի ռազմավարության իրականացումն ապահովող մեխանիզմներ և գործիքներ մշակելու, հաղորդակցության պատասխանատու նշանակելու և նրա պարտականությունների (տարեկան և ընթացիկ հաշվետվություններ, մամլո հաղորդագրության ձևանմուշի և տեսաֆիլմերի պատրասման սկզբունքների և հարցազրույցների վարման կամ տրման կանոնների մշակում, ծառայությունների բուկլետներ, գրքույկներ, տեղեկատու թերթիկներ, հաջողության պատմությունների ձևանմուշներ) իրականացումն ապահովելու.
- Ցանցի կայք ստեղծելու և դրա շահագործումն ապահովելու (կայքի մշակման կազմակերպության ընտրություն, կայքի կառուցվածքի նախագծում և հաստատում, ադմինիստրատորի ընտրություն).
- ՁԼՄ-ների հետ համագործակցության մեխանիզմ մշակելու և ՁԼՄ բազայի ստեղծելու.
- համագործակցության կանոնակարգ (ներքին և արտաքին) մշակելու:

6.8.4. Ցանցի ֆինանսական կայունության ապահովում, այդ թվում՝

- մատուցվող ծառայությունների համակարգ և ֆոնդահայթայթման արդյունավետ մեխանիզմներ մշակելու և դրանց իրականացումն ապահովելու.
- ֆինանսական կայունության ռազմավարություն մշակելու և ներդնելու
- ՀՀ-ում և արտերկրում գործող դոնորների տվյալների բազա ստեղծելու.
- Ցանցի՝ ֆոնդահայթայթման կարողություններն ու հմտությունները զարգացնելու.
- մատուցվող ծառայությունների ցանկը հստակեցնելու, ծառայությունների մոդուլներ և չափորոշիչներ, գնային քաղաքականություն, ծառայությունների որակի

վերահսկման մեխանիզմներ, ծառայությունների որակի ամենամյա գնահատում իրականացնելու.

- շուկայի ուսումնասիրություն և վերլուծություն իրականացնելու, բիզնես պլան մշակելու և դրա իրականացումն ապահովելու.
- դասընթացավարների, խորհրդատուների, մենթորների, ֆասիլիտատորների, ոլորտային փորձագետների բազա ստեղծելու և այն պարբերաբար թարմացնելու միջոցով:

6.9. Ընդլայնել Ցանցի գործունեությունը Հայաստանում և Արևելյան գործընկերության երկրներում

Հայաստանում և Արևելյան գործընկերության երկրներում Ցանցի գործունեության ընդլայնման ոլորտում ցանցի գերակա ուղղություններն ու խնդիրներն են.

6.9.1. Հայաստանում և Արևելյան գործընկերության երկրներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծման և զարգացման համապարփակ մոդելի մշակում, այդ թվում՝

- միջազգային և հայաստանյան փորձագետների համատեղ ջանքերով Վիննեթ Եվրոպայի մոդելը և Վիննեթ Հայաստանի փորձի համադրմամբ համապատասխան մոդել ու ձեռնարկ մշակելու.
- մոդելի ներդրման փորձնական (պիլոտային) երկու ծրագիր իրականացնելու միջոցով:

6.9.2. Արևելյան գործընկերության երկրներում կանանց ռեսուրս կենտրոնների և դրանց ցանցի ստեղծում՝ ՎԻՆՆԵԹ մոդելի հիման վրա, այդ թվում՝

- Արևելյան գործընկերության երկրներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծմանն ուղղված գործընկերության շրջանակ ձևավորելու, գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ աշխատաժողովներ և հեռավար քննարկումներ իրականացնելու.
- Արևելյան գործընկերության երկրներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծման կարիքները և նոր կենտրոններ ստեղծելու անհրաժեշտությունը բացահայտելու, ինչպես նաև տարածաշրջանային հետազոտություն իրականացնելու.
- գործընկեր կազմակերպությունների և նորաստեղծ ռեսուրս կենտրոնների ներկայացուցիչների տարածաշրջայանին հանդիպումներ, փորձի փոխանակման այցեր, համատեղ աշխատաժողովների և համաժողովներ կազմակերպելու միջոցով:

7. Գործողությունների ծրագիր

Ցանցի նպատակի իրականացումն արդյունավետ կերպով ապահովելու նպատակով ստորև աղյուսակում սահմանված են 2016-2020թթ. միջնաժամկետ հատվածում յուրաքանչյուր գերակա ուղղության համապատասխան խնդրի լուծմանն ուղղված **գործողությունները**, դրանց իրականացման **ժամկետները**, պատասխանատու **կատարողները**, ակնկալվող **արդյունքներն** ու մոնիտորինգի **ցուցիչները**:

Գերակա ուղղություն	Խնդիր	Գործողություն	Ժամկետ	Կատարողներ	Արդյունք	Մոնիտորինգի ցուցիչ
1.Աջակցել Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության ձևավորմանը, իրականացմանը և մոնիտորինգին	1.1. Թիրախ տարածաշրջաններում Ցանցի փորձառության, շահառուների կարիքների ներառում գենդերային քաղաքականության մշակման գործընթացում	1.1.1.Ապահովել ցանցի ներկայացվածությունն առանձին ոլորտներում պետական քաղաքականության մշակման, իրականացման և մոնիտորինգի նպատակով ստեղված գերատեսչական և միջգերատեսչական հանձնաժողովներում ու խորհուրդներում	2016 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		1.1.2. Ապահովել Ցանցի մասնակցությունը թիրախ տարածաշրջաններում գործող մարզային և համայնքային գենդերային հանձնաժողովների գործունեությանը	2016 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոններ		
		1.1.3. Պարբերաբար ամբողջականացնել Ցանցի շահառուների կարիքները և շարունակաբար բարձրաձայնել դրանք համապատասխան հարթակներում	2016 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոններ		
	1.2. Թիրախ տարածաշրջաններում գենդերային պետական քաղաքականության իրականացման մոնիտորինգ	1.2.1. Ամբողջականացնել Ցանցի մոնիտորինգի գործիքակազմը և քարտեզավորել պետական ծրագրերը	2017թ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոնների		

				փորձագետնե ր		
		1.2.2. Հետևողականորեն կիրառել մոնիտորինգի գործիքները, իրականացնել մոնիտորինգ և պատրաստել դրանց արդյունքների վերլուծություններ, մշակել առաջարկներ	2017 – 2020թթ .	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոնների փորձագետնե ր		
	1.3. Թիրախ տարածաշրջաններում համայնքային զարգացման քառամյա ծրագրերում և տարեկան բյուջեներում գենդերային հիմնախնդիրների ներառմանը աջակցություն	1.3.1. Ապահովել քույր քաղաքների համագործակցության օրակարգում համայնքի զարգացման սահմանված խնդիրներում գենդերային բաղադրիչի ներառումը	2017թ. 2019 – 2020թթ .	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Եղեգնաձորի ռեսուրս կենտրոն Այլ Ռեսուրս կենտրոններ		
		1.3.2. Հաստատել և զարգացնել համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ, մշակել և իրականացնել համատեղ ծրագրեր	2016 – 2020թթ .	Ռեսուրս կենտրոններ		
		1.3.3. Ներկայացնել Ցանցի շահառուների կարիքները, մոտեցումներն ու առաջարկությունները համայնքային մակարդակում	2016 – 2020թթ .	Ռեսուրս կենտրոններ		
		1.3.4. Ներկայացնել Ցանցի շահառուների կարիքները, մոտեցումներն ու առաջարկությունները մարզային մակարդակում (զարգացման ծրագրեր, տարեկան հաշվետվություններ և մարզային խորհուրդ, քաղաքաշինական խորհուրդ)	2017 – 2020թթ .	Ռեսուրս կենտրոններ		

2. Խթանել քաղաքական որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցությունը բոլոր մակարդակներում	2.1. Կանանց՝ որոշումների կայացման գործընթացին արդյունավետ կերպով մասնակցելու կարողությունների հզորացում	2.1.1. Խթանել երիտասարդ կանանց առաջնորդությունը և ուղղորդել նրանց դեպի քաղաքականությունը, կազմակերպել մոտիվացիոն հանդիպումներ և կլոր սեղաններ	2016-2020թթ.	Ռեսուրս կենտրոններ		
	2.2. Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման, կանանց հիմնախնդիրների լուծման գործում քաղաքական կուսակցությունների դերի բարձրացում	2.2.1. Խթանել քաղաքական կուսակցությունների պլատֆորմներում գենդերային հիմնախնդիրների ներառումը և իրականացնել դրանց լուծման ուղղությամբ կուսակցությունների ստանձնած պարտավորությունների մոնիտորինգ և գնահատում	2017 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
	2.3. ՏԻՄ համակարգի բարեփոխումներում և իշխանության ապակենտրոնացման գործընթացներում կանանց քաղաքական մասնակցության խնդիրների ներառման ապահովում	2.3.1. Իրականացնել ՀՀ համայնքների խոշորացման արդյունքում տեղական ինքնակառավարմանը կանանց մասնակցության մարտահրավերների և հնարավորությունների գնահատում	2016 – 2017թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Գորիսի և Մեղրու ռեսուրս կենտրոններ		
3. Աջակցել կանանց առողջության պահպանմանը	3.1. Առողջության, պահպանման հարցերի / և կանանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	3.1.1. Իրականացնել վերարտադրողական առողջության, սեռով պայմանավորված աբորտների, ոչ վարակիչ հիվանդությունների, երեխայի խնամքի և առողջության, առողջ ապրելակերպի խնդիրների վերաբերյալ իրազեկման քարոզարշավ	2016 – 2020թթ.	Ռեսուրս կենտրոններ		
	3.2. Կանանց, երեխաներին և ընտանիքներին տրամադրվող առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացմանը	3.2.1. Մշակել ծննդօգնության և այլ ծառայությունների մատուցման մոնիտորինգի տարրեր ու մեխանիզմներ	2016թ. 2017թ. 2018 –	Եղեգնաձորի ռեսուրս կենտրոն Կապանի ռեսուրս		

	նպաստում		2019թթ. 2018 – 2020թթ.	կենտրոն ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Գերազանցության կենտրոն		
		3.2.2. Իրականացնել մոնիտորինգ թիրախ տարածաշրջաններում	2016թ. 2017թ. 2018 – 2019թթ. 2018 – 2020թթ.	Եղեգնաձորի ռեսուրս կենտրոն Կապանի ռեսուրս կենտրոն ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Գերազանցության կենտրոն		
4. Նպաստել կանանց սոցիալական պաշտպանության համակարգի բարելավմանը	4.1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական ապահովության իրավունքների վերաբերյալ կանանց և ընտանիքների, ցանցի շահառուների իրազեկվածության բարձրացում	4.1.1. Անդամակցել ոլորտային հանձնախմբերին	2016 - 2020թթ. 2017 - 2020թթ.	Կապանի և Մեղրու ռեսուրս կենտրոններ		
		4.1.2. Մշակել և իրականացնել իրազեկման քարոզարշավի ծրագիր թիրախ տարածաշրջաններում	2016 - 2020թթ.	Կապանի և Մեղրու ռեսուրս կենտրոններ		
	4.2. Միության շահառուների	4.2.1. Ուղղորդել Միության շահառուներին	2016 –	Ռեսուրս		

	սոցիալական ապահովության իրավունքների իրականացմանը աջակցություն	սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակով	2020թթ. 2018 – 2020թթ.	կենտրոններ Գերազանցության կենտրոն		
		4.2.2. Հաստատել և զարգացնել շահառուների կարիքների բավարարմանն ուղղված համագործակցություն գործընկեր կառույցների հետ	2016 – 2020թթ. 2018 – 2020թթ.	Ռեսուրս կենտրոններ Գերազանցության կենտրոն		
5. Աջակցել գենդերային բռնության կանխարգելմանը	5.1. Թիրախ տարածաշրջաններում գենդերային բռնության դեմ պայքարի պետական քաղաքականության իրականացման մոնիտորինգ	5.1.1. Մշակել մոնիտորինգի գործիքակազմ և մեխանիզմներ	2017թ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		5.1.2. Իրականացնել շարունակական մոնիտորինգ և ապահովել մոնիտորինգի արդյունքների հրապարակայնությունը	2017 - 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոններ		
	5.2. Գենդերային բռնության զոհերի ուղղորդում և առանձին ծառայությունների մատուցում	5.2.1. Իրականացնել Գորիսի տարածաշրջանում գենդերային բռնության դեմ պայքարի տեղական կոալիցիայի աշխատանքները	2016 – 2020թթ.	Գորիսի ռեսուրս կենտրոն		
		5.2.2. Մշակել Ցանցի համար ծրագիր՝ Գորիսի տարածաշրջանի փորձի հիման վրա	2016 - 2017թթ.	Ցանցի անդամ կենտրոնները		
	5.3. Գենդերային բռնության հետևանքների, պատճառների և դրսևորումների վերաբերյալ հանրության իրազեկվածության	5.3.1. Մշակել և իրականացնել իրազեկման քարոզարշավ թիրախ տարածաշրջաններում	2016 - 2020թ.	Ռեսուրս կենտրոններ		

	բարձրացում, այդ թվում՝					
6. Խթանել կանանց մասնակցությունը հակամարտությունների կարգավորմանը և խաղաղարար գործունեությանը	6.1. ՀՀ սահմանամերձ համայնքներում կանանց և երեխաների հատուկ և զարգացման կարիքների բացահայտում, գնահատում և բարձրաձայնում և դրանց լուծմանն ուղղված նախաձեռնությունների մշակում	6.1.1. Մշակել և իրականացնել թիրախ սահմանամերձ համայնքներում կանանց ներգրավման և նրանց հիմնախնդիրների մոնիտորինգի ծրագիր	2017 - 2020թթ.	ՎԻՆՆԵԹ խորհուրդ Գորիսի, Կապանի և Իջևանի ռեսուրս կենտրոններ		
		6.1.2. Իրականացնել հակամարտություններից տուժած կանանց և երեխաներին հասարակությանը լիարժեք ինտեգրելու ծրագրեր և միջոցառումներ	2016 - 2020թթ.	ՎԻՆՆԵԹ խորհուրդ Գորիսի և Իջևանի ռեսուրս կենտրոններ		
	6.2. ՎԻՆՆԵԹ Եվրոպայի հարթակում ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման խնդիրների ներկայացում և երկխոսության ծավալում	6.2.1.	2017 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
	6.3. ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման գործողությունների ազգային ծրագրի մշակմանն ու իրականացմանը մասնակցություն, և թիրախ տարածաշրջաններում մոնիտորինգ	6.3.1. Աջակցել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման ազգային ծրագրի մշակման աշխատանքներն իրականացնող աշխատանքային խմբին, մշակել և աշխատանքային խմբին տրամադրել առաջարկներ	2016-2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		6.3.2. Մշակել ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևի իրականացման ազգային ծրագրի մոնիտորինգի գործիքակազմ և մեխանիզմներ, և ներդնել թիրախ տարածաշրջաններում	2017 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոններ		
7. Աջակցել	7.1. Ձեռներեցության ոլորտում	7.1.1. Իրականացնել կարիքի գնահատում	2016 –	Նորաստեղծ		

կանանց տնտեսական դերի և մրցունակության զարգացմանը	կանանց հետաքրքրվածության ու ներգրավվածության բարձրացում	թիրախ տարածաշրջաններում	2018թթ. 2018 – 2020թթ.	ռեսուրս կենտրոններ Գերազանցության կենտրոն		
		7.1.2. Իրականացնել իրազեկման, խորհրդատվության և մենթորության միջոցառումներ	2016 – 2020թթ. 2017 - 2020թթ.	Գորիսի, Կապանի, Մեղրու և Սիսիանի ռեսուրս կենտրոններ Եղեգնաձորի և Իջևանի ռեսուրս կենտրոններ		
		7.1.3. Զարգացնել կանանց և ընտանեկան բիզնեսների կարողությունները	2016 – 2020թթ. 2017 - 2020թթ.	Գորիսի, Կապանի, Մեղրու և Սիսիանի ռեսուրս կենտրոններ Եղեգնաձորի և Իջևանի ռեսուրս կենտրոններ		
	7.2. Թիրախ տարածաշրջաններում կանանց ձեռներեցության զարգացում	7.2.1. Իրականացնել շուկայի հետազոտություն թիրախ շուկաներում (թիրախ տարածաշրջաններ, Հայաստան, գլոբալ)	2018-2019թթ.	Գերազանցության կենտրոն		
		7.2.2. Ընդլայնել կանանց ձեռներեցության շուկաները Հայաստանում և արտերկրում, ստեղծել և ամրապնդել գործարար կապեր, ապահովել ցուցահանդեսներին Միության և	2016 – 2020թ..	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		

		շահառուների մասնակցությունը				
		7.2.3. Դիվերսիֆիկացնել կանանց ձեռներեցության զարգացման ֆինանսավորման աղբյուրները թիրախ տարածաշրջաններում	2016 – 2020թ..	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		7.2.4. Ստեղծել ռեսուրս կենտրոններին կից սոցիալական ձեռնարկություններ և ապահովել դրանց գործունեության արդյունավետ կառավարումը	2017թ.	Եղեգնաձորի և Իջևանի ռեսուրս կենտրոններ		
		7.2.5. Ընդլայնել սոցիալական ձեռնարկությունները	2017 - 2020թթ.	Գորիսի, Կապանի, Մեղրու և Սիսիանի ռեսուրս կենտրոններ		
	7.3. Թիրախ տարածաշրջաններում կանանց զբաղվածության ընդլայնում	7.3.1. Իրականացնել գարգազման ուղղությունները բացահայտող կարիքի գնահատում	2016 – 2020թթ. 2018 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Գերազանցության կենտրոն		
		7.3.2. Մշակել և իրականացնել նոր աշխատատեղեր ստեղծելու (տնայնագործություն, նորարար և բարձր վարձատրությամբ) ծրագրեր	2016 – 2020թթ.	Ռեսուրս կենտրոններ		
		7.3.3. Մշակել և իրականացնել աշխատաշուկայում կանանց մասնագիտական մրցունակության բարձրացման ծրագրեր	2016 – 2020թթ.	Ռեսուրս կենտրոններ		
8. Զարգացնել Ցանցրի և	8.1.Ցանցի անդամ կառույցների և ցանցի ինստիտուցիոնալ	8.1.1. Մշակել գնահատման գործիք, իրականացնել գնահատում և պատրաստել	2017 – 2019թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի		

դրա անդամ կառույցների ինստիտուցիոնալ կարողությունները	կարողությունների գնահատում և զարգացման պլանների մշակում	արդյունքների հաշվետվություն		խորհուրդ		
		8.1.2. Մշակել կազմակերպությունների անհատական և ցանցային զարգացման պլաններ և հստակեցնել պատասխանատուներին	2017 – 2019թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոններ		
	8.2. Ցանցի կառավարման համակարգի զարգացում, համապատասխան չափորոշիչներ և ընթացակարգերի մշակում	8.2.1. Մշակել և հաստատել Ցանցի կանոնադրությունը	2017 – 2018 թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.2.2. Մշակել և ներդնել Ցանցի կառավարման ընթացակարգերն ու կառուցվածքը, հաշվետվողականության (ֆինանսական և ծրագրային աուդիտ) և թափանցիկության (հաշվետվություններ) գործիքներ	2017–2018թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.2.3. Մշակել և ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման ներքին ընթացակարգեր (պայմանագրեր, աշխատանքի նկարագրեր, տեխնիկական առաջադրանքներ, ներծրագրային ToR-եր) և կատարողականության մեխանիզմ	2017 – 2019թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.2.4. Մշակել և ներդնել արդյունավետ հաղորդակցության համակարգեր (էլեկտրոնային ընթացակարգեր և ձևանմուշներ), միասնական փաստաթղթաշրջանառության համակարգ, ֆինանսական հաշվետվությունների համակարգ	2016 – 2019թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
	8.3. Ցանցի հանրային հաղորդակցության և կապերի ռազմավարության մշակում	8.3.1. Քարտեզագրել շահագրգիռ կողմերը և մշակել ռազմավարություն	2016 – 2017թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.3.2. Մշակել հանրային հաղորդակցության և	2016 –	ՎԻՆՆԵԹ		

		կապերի ռազմավարության իրականացումն ապահովող մեխանիզմներ և գործիքներ, նշանակել հաղորդակցության պատասխանատու և ապահովել նրա պարտականությունների (տարեկան և ընթացիկ հաշվետվություններ, մամլո հաղորդագրության ձևանմուշի և տեսաֆիլմերի պատրաստման սկզբունքների և հարցազրույցների վարման կամ տրման կանոնների մշակում, ծառայությունների բուկլետներ, գրքույկներ, տեղեկատու թերթիկներ, հաջողության պատմությունների ձևանմուշներ) արդյունավետ իրականացումը	2017թթ.	Հայաստանի խորհուրդ		
		8.3.3. Ստեղծել Ցանցի կայքը և ապահովել դրա շահագործումը (կայքի մշակման կազմակերպության ընտրություն, կայքի կառուցվածքի նախագծում և հաստատում, ադմինիստրատորի ընտրություն)	2017թ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.3.4. Մշակել ՀԼՄ-ների հետ համագործակցության մեխանիզմ և ստեղծել գործընկեր ՀԼՄ-ների բազա	2016 – 2017թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.3.5. Մշակել համագործակցության կանոնակարգ (ներքին և արտաքին)	2017 - 2018թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
	8.4. Ցանցի ֆինանսական կայունության ապահովում	8.4.1. Մշակել մատուցվող ծառայությունների համակարգ և ֆոնդահայթայթման արդյունավետ մեխանիզմներ ու ապահովել դրանց իրականացումը	2017 - 2019թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.4.2. Մշակել և ներդնել ֆինանսական կայունության ռազմավարություն	2017թ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.4.3. Ստեղծել ՀՀ-ում և արտերկրում գործող	2017թ.	ՎԻՆՆԵԹ		

		դոնորների տվյալների բազա		Հայաստանի խորհուրդ		
		8.4.4. Զարգացնել Ցանցի ֆոնդահայթայթման կարողություններն ու հմտությունները	2017 – 2018թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		8.4.5. Հստակեցնել մատուցվող ծառայությունների ցանկը, մշակել ծառայությունների մոդուլներ և չափորոշիչներ, գնային քաղաքականություն, ծառայությունների որակի վերահսկման մեխանիզմներ, իրականացնել ծառայությունների որակի ամենամյա գնահատում	2016 – 2019թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոններ		
		8.4.6. Իրականացնել շուկայի ուսումնասիրություն և վերլուծություն, մշակել բիզնես պլան և ապահովել դրա իրականացումը	2016 – 2018թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոններ		
		8.4.7. Ստեղծել և պարբերաբար թարմացնել դասընթացավարների, խորհրդատուների, մենթորների, ֆասիլիտատորների, ոլորտային փորձագետների բազա	2016 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ Ռեսուրս կենտրոններ		
9. Ընդլայնել Ցանցի գործունեությունը Հայաստանում և Արևելյան գործընկերության երկրներում	9.1.Հայաստանում և Արևելյան գործընկերության երկրներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծման և զարգացման համապարփակ մոդելի մշակում	9.1.1. Մշակել Վիննեթ Եվրոպայի մոդելի հիման վրա և Վիննեթ Հայաստանի փորձի համադրմամբ համապատասխան մոդել ու ձեռնարկ՝ միջազգային և հայաստանյան փորձագետներ ներգրավելով	2016 – 2017թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		9.1.2. Իրականացնել մոդելի ներդրման փորձնական (պիլոտային) երկու ծրագիր	2017 – 2018թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		

	9.2. Արևելյան գործընկերության երկրներում կանանց ռեսուրս կենտրոնների և դրանց ցանցի ստեղծում՝ ՎԻՆՆԵԹ մոդելի հիման վրա	9.2.1. Ձևավորել Արևելյան գործընկերության երկրներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծմանն ուղղված գործընկերության շրջանակ	2016 – 2017թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		9.2.2. Իրականացնել գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ աշխատաժողովներ և հեռավար քննարկումներ	2017 – 2018թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		9.2.3. Բացահայտել Արևելյան գործընկերության երկրներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծման կարիքները և նոր կենտրոններ ստեղծելու անհրաժեշտությունը, իրականացնել տարածաշրջանային հետազոտություն	2017 – 2018թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		
		9.2.4. Կազմակերպել գործընկեր կազմակերպությունների և նորաստեղծ ռեսուրս կենտրոնների ներկայացուցիչների տարածաշրջայանին հանդիպումներ, փորձի փոխանակման այցեր, համատեղ աշխատաժողովների և համաժողովներ	2017 – 2020թթ.	ՎԻՆՆԵԹ Հայաստանի խորհուրդ		

8. Ցանցի ռազմավարության կառավարումը

Ցանցի ռազմավարության կառավարումն իրականացնում է կենտրոնացված կարգով՝ համակարգող խորհրդի (ՀԽ) կամ Վիննեթ Հայաստանի Կանանց Ռեսուրս կենտրոնների ցացի խորհրդի կողմից, որը կազմված է ռեսուրս կենտրոնների խորհուրդների ներկայացուցիչներից: Ցանցի հաշվետվողական համակարգը հիմնված է ցանցի կառուցվածքի և գործունեության կանոնակարգերի վրա: Ռազմավարական պլանավորման վերահսկումը իրականացնում է ՎԻՆՆԵԹ Հայաստան ՀԽ-ն:

Ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը մշակվում և վերանայվում է ՀԽ-ի և ռեսուրս կենտրոնների աշխատակազմների մասնակցությամբ: Այն ներկայացվում է Ցանցի ընդհանուր ժողովին և քննարկվում: Փաստաթղթի վերջնական հաստատումից հետո այն կիրառվում է:

9. Հավելված

9.1. SWOT վերլուծության արդյունքներ

9.1.1. Ուժեղ կողմեր

- Հայաստանում կանանց ռեսուրս կենտրոնների **կայացած** և **կայուն** միակ ցանց.
- **Մարդկային ռեսուրսներ**. ցանցում ընդգրկված կանանց մեծ ներուժ, աշխատակազմ, անդամներ, շնորհալի արհեստագործ կանանց ներուժ, տեղական կամավորներ, Խաղաղության Կորպուսի կամավորներ, որոնք ունեն՝ նվիրվածություն, պատասխանատվություն, պատրաստակամություն և ներուժ (մասնագետներ, թարգմանիչ, դասընթացավար), առաջնորդություն.
- **Նյութատեխնիկական բազա**. վարձակալված տարածք, հանդիպումների սենյակ, համակարգիչ, տպիչ սարք, սկաներ, ինտերնետ, էլ փոստ. ֆաքս, բայնդեր, պատճենահանող սարք, լամինացիոն սարք, գունավոր տպիչ, պրոյեկտոր, հեռուստատեսային տաղավար՝ համապատասխան սարքավորումներով).
- Կանանց ռեսուրս կենտրոններ ստեղծելու և համակարգելու փորձառություն, գործունեության տարբեր ոլորտներում աշխատելու **փորձառություն** (քաղաքական, սոցիալ –տնտեսական, բնապահպանական, զբոսաշրջության և այլն).
- Ցանցի **անդամ կազմակերպությունների** կողմից համագործակցության **պատրաստակամություն.**
- **Ակումբների** առկայություն (ձեռքի աշխատանքի ակումբ, լրագրողների ակումբ, լիդերների ակումբ, կարիերայի ակումբ).
- Ռեսուրս կենտրոններին կից ձեռքի աշխատանքների արհեստանոցներ՝ **սոցիալական ձեռնարկություններ, ձեռնարկատիրական գործունեություն**.
- Մատուցվող վճարովի և անվճար **ծառայություններ** (լրագրության ոլորտ, ձեռքի աշխատանքներ, անգլերենի ուսուցում, էքսպոների և կորպորոտիվ միջոցառումների կազմակերպում).
- ՎԻՆՆԵԹ Եվրոպա կանանց ռեսուրս կենտրոնների խոշորագույն **միջազգային ցանցին անդամակցություն**.
- **ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի** հետ ամուր համագործակցություն և գործընկերություն.
- Կառավարման մարմիններ՝ **Խորհուրդ, Ընդհանուր ժողով, Վերստուգիչ հանձնաժողով**, որի անդամներն ունեն. նվիրվածություն, պատասխանատվություն, պատրաստակամություն և ներուժ (մասնագետներ, թարգմանիչ, դասընթացավար).
- **Փորձագետների** առկայություն (կարողությունների զարգացման մասնագետ, համայնքային զարգացման մասնագետ, մեդիա ոլորտի մասնագետ. ՏԻՄ ոլորտի փորձառություն ունեցող մասնագետ, տուրիզմի ոլորտի, ընտանեկան բռնության և գենդերային հարցերի մասնագետ, համայնքային զարգացման ոլորտի, անգլերենի,

ձեռքի աշխատանքների զարգացման մասնագետ, ցուցահանդեսների և կորպորատիվ միջոցառումների կազմակերպիչ.

- Եվրոպական փորձագետների և գործընկերների հետհամագործակցություն.
- Կենտրոնների գործունեության լայն **աշխարհագրական** շրջանակ.
- Անդամ կազմակերպություններն ունեն **վեբ կայք.**
- **Համատեղ աշխատելու** փորձառություն (համատեղ նախաձեռնությունների մշակում և իրականացում):

9.1.2. Թույլ կողմեր

- Ցանցի **իրավաբանական անձի կարգավիճակի** բացակայություն.
- Ցանցի **անդամների** սակավություն**.**
- Ձեռքի աշխատանքների զարգացման համար **նյութերի**, **սարքավորումների** և **ֆինանսական** ռեսուրսների սակավություն, մշտական **տարածքների** բացակայություն.
- **Կայուն ֆինանսական աղբյուրների** բացակայություն.
- Ընթացիկ **երկարաժամկետ ծրագրերի** բացակայություն.
- Ցանցի գործունեության մասին **իրազեկվածության** ցածր մակարդակ, **հաղորդակցության** գործիքների անկատարություն **(կայք, տեղեկատվական նյութեր** և այլն**), քարոզչական նյութերի** բացակայություն (գովազդ, պաստառ և այլն).
- **Տվյալների բազայի** բացակայություն.
- **Տպագիր մամուլի** բացակայություն (բրոշյուր, թերթ, պաշտոնական տեղեկագիր և այլն).
- Ցանցի **ընթացակարգերի** անկատարություն.
- Ցանցի կողմից տրամադրվող **որակյալ ծառայությունների** սակավություն.
- **Հետազոտական հմտությունների** բացակայություն, արտահանման ոլորտում **գիտելիքների** և **փորձի** պակաս.
- **Դասընթացավարների**, **փորձագետների** սակավություն.
- Անդամ կազմակերպությունների **ինստիտուցիոնալ կարողությունների** զարգացող մակարդակ.
- **Գործադիր մարմնի** և **խորհրդի** ոչ լիարժեք գործունեությունը.
- Թույլ **համագործակցություն իշխանությունների** հետ.
- **Վճարովի ծառայությունների** մատուցման սակավություն:

9.1.3. Հնարավորություններ

- **Գործընկերների**, **համախոհների** առկայություն.
- **Մաքսային Միությանը** Հայաստանի անդամակցություն.
- **ՎԻՆՆԵԹ Եվրոպայի** համագործակցություն, այդ թվում՝ Եվրոպական ցանցի անդամ կազմակերպությունների հետ համագործակցություն.
- Արևելյան գործընկերության երկրներում ՎԻՆՆԵԹ Հայաստանի **փորձի տարածման** հանդեպ հետաքրքրվածություն.
- ՀՀ-ում և արտերկրում գործող կանանց հզորացմանն ուղղված ծրագրեր ֆինանսավորող **դոնորներ** (գենդերային հարցերով զբաղվող ՀԿ-ներ).
- ՀՀ-ում գործող **գենդերային թույլ քաղաքականություն.**
- Գենդերային քաղաքականության **ազգային ծրագիր.**
- **Տարածաշրջանային դիրք.**
- **Աշխարհագրական դիրքը.**
- ՀՀ-ում առկա **սոցիալ–քաղաքական իրավիճակը.**
- ՀՀ-ում նմանատիպ **ցանցերի բացակայություն.**
- Կանանց հիմնախնդիրներով զբաղվող **ՔՀԿ-ների** առկայություն ՀՀ-ում և արտերկրում.
- Քաղաքական և տնտեսական ոլորտներում **հաջողության հասած կանայք.**
- Այլ ցանցերի հետ **համագործակցության** հնարավորություն.
- **ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությունը.**
- **Շվեդական** կառավարության և Արտաքին գործերի նախարարության կողմից աջակցություն.
- **Սփյուռքի հետաքրքրվածություն ցանցի նկատմամբ**
- Ազգային ծրագրերի շրջանակներում **կառավարության քաղաքականությունը.**
- **Տեղական բիզնեսներ.**
- ՏՀՏ՝ **տեղեկատվական տեխնոլոգիաներ.**

9.1.4. Արտաքին սպառնալիքներ

- **Իշխանությունների** կողմից (համայնքային, մարզային, համապետական) **խոչընդոտներ.**
- **Քաղաքական** վիճակի կտրուկ փոփոխություն (իշխանափոխություն, օրենսդրական դաշտի ոչ նպաստավոր օրենքների ընդունում գենդերային ոլորտում).
- **Սոցիալ–տնտեսական վիճակի** շարունակական վատթարացում (տնտեսական ճգնաժամի շարունակական ընթացք, միգրացիա, վարկերի բարձր տոկոսադրույք կամ բացակայություն).

- **Շարունակվող հակամարտություն, տարածաշրջանային անկայունություն.**
- Հասարակության մեջ առկա կարծրատիպեր.
- Բնական **աղետներ.**
- Դոնորների համայնքի շարունակական նվազում և ռեսուրսների աղբյուրների կենտրոնացում (ԵՄ)
- **Երկարաժամկետ** ֆոնդերի **անհասանելիություն** և/կամ բացակայություն.
- Համայնքային զարգացման ծրագրերում կանանց և ընտանիքին վերաբերող հարցերի բացակայություն: